ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

16.07.2018թ.

ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
թիվ ՍՑ-ԱՄ-2018/93

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.06.2018թ. թիվ 03/26-3/11428-18 գրությամբ Ա/Ձ Զավեն Սերյոժայի Եղիազարյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի 21.06.2018թ. թիվ Ե/40/378-18 գրության հիման վրա, 25.06.2018թ. թիվ 03/26-3/11428-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել Ա/Ձ Զավեն Սերյոժայի Եղիազարյանին (այսուհետ՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>Ա/Ձ Զավեն Սերյոժայի Եղիազարյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Ա/Ձ Զավեն Սերյոժայի Եղիազարյանը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ որևէ դիրքորոշում չի ներկայացրել:

Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/93 ընթացակարգի շրջանակներում 28.06.2018թ. ժամը 10:30-ին և 02.07.2018թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>«Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 21.06.2018թ. թիվ Ե/40/378-18 գրությամբ հայտնել է, որ «Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից 25.04.2018թ. հրապարակվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-61/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որով կայանի կարիքների համար ձեռք են բերվելու ցածրավոլտ սարքավորումներ և պահեստամասեր: Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել Ա/Ձ Զավեն Սերյոժայի Եղիազարյանը: Գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրությամբ, թիվ 1 չափաբաժնի մասով ներկայացված ցածր գնային առաջարկով 1-ին տեղ է զբաղեցրել Ա/Ձ Զավեն Սերյոժայի Եղիազարյանը, որը 07.05.2018թ. ներկայացրել է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը, որում գնահատող հանձնաժողովը արձանագրել է անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ:

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 47-րդ կետի, մասնակցին տրվել է մեկ աշխատանքային օր՝ առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու համար: Շտկման նպատակով ներկայացված փաստաթղթերը գնահատող հանձնաժողովը գնահատել է անբավարար այն հիմնավորմամբ, որ Մասնակցի կողմից առաջարկվող ИС-203.4 և

որպես այլընտրանք ներկայացրած ИС-203.2 սարքերը չափիչ գրանցիչ սարքեր են (Измеритель регистратор), այնինչ հրավերով պահանջվում է չափման փոխակերպիչ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/93 ընթացակարգի շրջանակներում 28.06.2018թ. ժամը 10:30-ին և 02.07.2018թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/93 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/93 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.«Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից «Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար ցածրավոլտ սարքավորումների և պահեստամասերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-61/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Զավեն Սերյոժայի Եղիազարյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2018-03.05.2018թթ. ժամը 15:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 9-րդ կետի համաձայն՝ Ա/Ձ Զավեն Սերյոժայի Եղիազարյանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին սահմանված կարգով ծանուցվել է Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.05.2018թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ Ա/Ձ Զավեն Սերյոժայի Եղիազարյանի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում առկա են թերություններ, մասնավորապես Մասնակցի կողմից առաջարկված սարքի հարաբերական խոնավությունը 0-90 է, այնինչ հրավերով պահանջվում է 0-100, ջերմաստիճանը -50-180, այնինչ պահանջվում է 20-110, ճնշումը 16 ՄՊա, այնինչ պահանջվում է 2 ՄՊա, հրավերով

նախատեսված սնուցման սարքը ներբեռնված է անմիջապես սարքավորման մեջ, ինչն առաջարկված ապրանքի համար առանձին է, վահանակային ամրացումը պետք է ձևափոխվի, որը հնարավոր չէ: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և Ա/Ձ Զավեն Սերյոժայի Եղիազարյանին ծանուցել արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.05.2018թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 3-րդ կետով կայացված որոշմամբ Ա/Ձ Զավեն Սերյոժայի Եղիազարյանի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել, այն հիմնավորմամբ, որ Մասնակցի կողմից առաջարկված սարքը չի համապատասխանում հրավերի պահանջներին, քանի որ հրավերով նախատեսված է ձեռք բերել չափման փոխակերպիչ, իսկ Մասնակցի կողմից առաջարկվող ИС-203.4 և որպես այլընտրանք ներկայացված ИС-203.2 սարքերը չափիչ-գրանցիչ սարքեր են (измеритель регистратор):

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 25.06.2018թ. թիվ 03/26-3/11428-18 գրությունը, «Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի 21.06.2018թ. թիվ Ε/40/378-18 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի,

ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Նույն Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից «Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար ցածրավոլտ սարքավորումների և պահեստամասերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-61/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի տեխնիկական բնութագրի 1-ին չափաժանով նախատեսվել է ձեռք բերել ***չափման փոխակերպիչ,*** որի համար սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

	Նախատեսված է շրջակա միջավայրի

Չափման փոխակերպիչ	ջերմաստիճանի, հարաբերական խոնավությունը անընդհատ չափելու, տարատեսակ անալոգիական ելքային հոսանքը վերահսկելու համար, ելքային ազդանշանը՝ 4-20մԱ, հարաբերական խոնավություն՝ 0÷100%, ջերմաստիճանը՝ 20°C÷110°C, չափվող միջավայրի ճնշումը՝ 2,0 ՄՊա

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Զավեն Սերյոժայի Եղիազարյանը, ով հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-61/18» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հայտարարության համաձայն՝ Ա/Ձ Զավեն Սերյոժայի Եղիազարյանը պարտավորվել է առաջին զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-61/18» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2018-03.05.2018թթ. ժամը 15:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 9-րդ կետի համաձայն՝ Ա/Ձ Զավեն Սերյոժայի Եղիազարյանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին սահմանված կարգով ծանուցվել է Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետի 3.1 ենթակետով նախատեսվել է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է

իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի:

Մասնակցի կողմից հայտի թիվ 6.1 հավելվածով Ընթացակարգի 1-ին չափաբանի մասով ներկայացվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Չափման փոխակերպիչ	Չափման փոխակերպիչ ИС-203.4 (չորս ալիքանի, ունիվերսալ): Սնուցման սարքը БПС 24.0-0.3 ИС203.3.02.080-01: Կոմպլեկտի հետ առկա են հետևյալ մասերը համակարգչի վրա ինֆորմացիայի դուրսգման համար. CD-R ունիվերսալ սկավառակ (СОД էլեկտրոնային ձայնագրիչների համար): Ազդանշանի փոխակերպիչ ПС-2 USB/RS-485 (նախատեսված ИС-203.3, ИС-203.4 համար): Հարաբերական խոնավության և ջերմաստիճանի շարժական չափիչ՝ ИВТМ-7Н-04-18-Б1 (մետաղական իրան, ելքային 4-20мА ընդհանուր մինուսով, մինի խոսափող (-45°...+120° C) Մալուխ՝ ИС203.3.02.190 (ИВТМ7Н միացման համար): Ճնշման փոխարկիչ՝ ПДТВХ-1-02 (վերին սահմանը 16 МПа, ելքային ազդանշան 4-20мА, անճշտություն 1,0 %, МПИ 4 տարի))

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.05.2018թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ Ա/Ձ Զավեն Սերյոժայի Եղիազարյանի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում առկա են թերություններ, մասնավորապես Մասնակցի կողմից առաջարկված սարքի հարաբերական խոնավությունը 0-90 է, այնինչ հրավերով պահանջվում է 0-100, ջերմաստիճանը -50-180, այնինչ պահանջվում է 20-110, ճնշումը 16 ՄՊա, այնինչ պահանջվում է 2 ՄՊա, հրավերով նախատեսված սնուցման սարքը ներբեռնված է անմիջապես սարքավորման մեջ, ինչն առաջարկված ապրանքի համար առանձին է, վահանակային ամրացումը պետք է ձևափոխվի, որը հնարավոր չէ: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և 14.05.2018թ. Ա/Ձ Զավեն Սերյոժայի Եղիազարյանին ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ի պատասխան 14.05.2018թ. ուղարկված ծանուցման՝ Մասնակիցը 15.05.2018թ. գնահատող հանձնաժողովի քարտուղարին ուղարկած էլեկտրոնային նամակով հայտնել է, որ ИС-203.4 սարքի հարաբերական խոնավությունը բավարարում է տեխնիկական բնութագրի պահանջներին, իսկ գնահատող հանձնաժողովի կողմից նշված 0-90 միջակայքը վերաբերում է սարքի շահագործման վայրի հարաբերական խոնավությանը: Ջերմաստիճանն ընդգրկում է տեխնիկական բնութագրում նշված 20-110 միջակայքը և դեռ ավելին դա միայն առավելություն է: Ճնշումը նույնպես տեխնիկական բնութագրով պահանջվում է 2 ՄՊա, իսկ Մասնակցի կողմից առաջարկած սարքը հնարաավորություն ունի մինչև 16ՄՊա, դա միայն առավելություն է: Մասնակիցը հայտնել է նաև, որ Ընթացակարգի տեխնիկական բնութագրում չկա ոչինչ նշված սնուցման աղբյուրի առանձնահատկությունների մասին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.05.2018թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 3-րդ կետով կայացված որոշմամբ Ա/Ձ Զավեն Սերյոժայի Եղիազարյանի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել, այն հիմնավորմամբ, որ Մասնակցի կողմից առաջարկված սարքը չի համապատասխանում հրավերի պահանջներին, քանի որ հրավերով նախատեսված է ձեռք բերել ***չափման փոխակերպիչ, իսկ Մասնակցի կողմից առաջարկվող ИС-203.4 և որպես այլընտրանք ներկայացված ИС-203.2 սարքերը չափիչ-գրանցիչ սարքեր են (измеритель регистратор):***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-61/18» ծածկագրով Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի 1-ին չափաբաժինը և այն համադրելով Ա/Ձ Զավեն Սերյոժայի Եղիազարյանի կողմից առաջարված ապրանքի տեխնիկական բնութագրի հետ, գտնում եմ, որ Մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-61/18» ծածկագրով Ընթացակարգի հրավերին: Մասնավորապես՝ Ա/Ձ Զավեն Սերյոժայի Եղիազարյանի կողմից առաջարկվել են ИС-

203.4 և որպես այլընտրանք՝ ИС-203.2 սարքերը, որոնք չափիչ-գրանցիչ սարքեր են (Измеритель регистратор), այնինչ հրավերով պահանջվել է չափման փոխակերպիչ: Դրա հետ մեկտեղ համեմատելով Մասնակցի կողմից առաջարկված սարքի և հրավերով պահանջվող գնման առարկայի տեխնիկական բնութագրերը, գտնում եմ, որ դրանք մի շարք տեխնիկական հատկանիշներով նույնպես չեն համապատասխանում, մասնավորապես՝ Մասնակցի կողմից առաջարկվող սարքի հարաբերական խոնավությունը 0-90 % է, այնինչ հրավերով պահանջվել է 0-100%, չափվող միջավայրի ճնշումը՝ 16 ՄՊա, իսկ հրավերով պահանջվել է 2 ՄՊա:

Այսպիսով, արձանագրում եմ, որ Ա/Ձ Զավեն Սերյոժայի Եղիազարյանի կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին, մինչդեռ Մասնակիցը հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-61/18» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը համապատասխանում է հրավերի համապատասխան չափաբաժնում նշված ապրանքի տեխնիկական բնութագրերի պահանջներին և պարտավորվել է առաջին զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ Ա/Ձ Զավեն Սերյոժայի Եղիազարյանը «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-61/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.06.2018թ. թիվ 03/26-3/11428-18 գրությամբ Ա/Ձ Զավեն Սերյոժայի Եղիազարյանին (ՀՎՀՀ՝ 86215812) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Զավեն Սերյոժայի Եղիազարյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ